«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր, 2017թ.

Օտար լեզվից բանավոր քննությունը 9-րդ դասարանում

Քննությունը հիմնվում է տարվա ընթացքում սովորողի կատարած աշխատանքի և ձեռք բերած կարողությունների վրա: Նույն քննության ընթացքում սովորողը ստուգվում է երկու օտար լեզվից՝ անգլերեն և ռուսերեն: Յուրաքանչյուր լեզվի հարցատոմսը երկու հարց ունի.

- Սովորողը անձնական բլոգում ցույց է տալիս տարվա ընթացքում իր կատարած աշխատանքը, ընտրում է դրանցից իր կարծիքով ամենահաջողվածը և ներկայացնում այդ աշխատանքը՝ ինչպես կատարեց, ինչ տվեց իրեն (աշխատանքը կարող է լինել թարգմանություն, գրական ստեղծագործության մասին կարծիք, սեփական ստեղծագործություն), պատասխանում է հարցերի:
- Նոր առաջադրանք, որի կատարումը կպահանջի մոտ 10 րոպե:

Սովորողը գալիս է քննության սեփական համակարգչով, որը օգտագործում է պատրաստվելիս և ներկայացնելիս: Քննասենյակում կա պրոյեկտոր: Սովորողը պատրաստվելու ժամանակ ունի 20-30 րոպե: Պատրաստ լինելու դեպքում կարող է ավելի շուտ պատասխանել:

Գնահատականը նշանակում է դասավանդող ուսուցիչը: Քննական գնահատական ընդունվում է գնահատականներից բարձրը:

Հանրակրթության պետական չափորոշիչի ընդհանրական պահանջներից 9-րդ դասարանն ավարտողին.

2) կարողանա հաղորդակցվել 2 օտար լեզվով՝

ա. կենցաղային իրավիճակներում պատասխանի պարզ հարցերի,

բ. հաղորդակցվի ծանոթ հարցերի և թեմաների շուրջ մեկ կամ մի քանի զրուցակիցների հետ,

գ. գրավոր կամ բանավոր ներկայացնի առօրյա կյանքից որևէ իրադարձություն, դիպված,

գ. կարդա և գրի պարզ տեքստեր,

դ. ճանաչի ուսումնասիրվող լեզուներով հանրահայտ մշակութային արժեքները: